

Հասարակական վստահությունը՝ հիմնական չափորոշիչ

ՕՖԵԼՅԱ ԿԱՄԱԿՈՍՅԱՆ

Հայաստանի դատական համակարգն ամբողջովին անկախ դառնալու համար դեռևս բավականին դժվարին ուղի ունի անցնելու: Նման ասակետ հայտնեց ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահ **Հովհաննես Մանուկյանը**՝ արձանագրելով, որ հիմնական ու կարևորագույն դժվարություններից մեկն էլ հասարակության շրջանում դատական համակարգի նկատմամբ վստա-

հույան մթնոլորտ ստեղծելն է: Խիստ կարևոր ու հասկանալի է նաեւ այս համակարգում կոռուպցիոն դրսեւորումների բացառումը: «**Հասարակությունը կարող է դաժանել դատական համակարգի այնպիսի մակարդակ, ինչպիսի նյութական վարձատրությունն է այդ համակարգին: Մարդիկ ղեկավարում են, որ դա անհրաժեշտ է կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու համար**», -ասաց նա՝ հայտարարելով դատավորների աշխատավարձերի բարեփոխման իրա-

կանացման անհրաժեշտության մասին: Ներկայում դատավորների միջին աշխատավարձը մոտ 250 հազար դրամ է, ինչը, ըստ նրա, ղեկավարում է մոտ 250 հազար դրամ անգամ բարձրացվի: Վճռաբեկ դատարանի նախագահի կարծիքով, դատական համակարգի նկատմամբ հասարակական անվստահության օբյեկտիվ դրսեւորումները գալիս են ինչպես խորհրդային շրջանից ժառանգություն մնացած բարոյաբաններից ու դատական համակարգի գործունեության հանդեպ բացա-



սական վերաբերմունքից, այնպես էլ գործող դատավորների

կերտարից: Այս հարցի լուծումը բանախոսն ուրվագծում է դատարանական բարեփոխումների երկու փուլի ավարտից հետո, իսկ օրեր առաջ երկրի դեկլարի կողմից վավերացված **Դատական օրենսգրքի** կնդրատեսակի այս առումով էական առաջընթաց արձանագրելու գործին: Հ. Մանուկյանը շեղեկացրեց, որ այդ օրենսգրքի սահմանում է դատավորին առաջադրվող բոլոր բարոյական չափանիշները, էթիկայի ու վարձագրի կանոնները, եւ դրանք դատարանի են բոլոր դատավորների համար:

Դատավորների համար սահմանված բարոյական չափանիշները հասարակական բարոյականության մակարդակից շատ ավելի խիստ ու բարձր են, եւ «**հասարակության վստահությունը դատական համակարգի նկատմամբ ղեկավարում է խարսխված լինի դատավորի բարձր բարոյական չափանիշների վրա**»:

Դատական օրենսգրքի սահմանափակում է դատավորների՝ նվերներ ստանալու իրավունքը, իսկ ստացած բոլոր նվերների, դրանց աղբյուրների ու արժեքի մասին դատավորները պարտավոր են շեղեկացնել ու հաշվետու լինել Դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողովին: Նույն սահմանափակումները սարածվում են նաեւ դատավորների մեծամասնության ազգականների վրա: Բացի այդ, դատավորները պարտավոր են իրենց եկամուտների մասին հայտարարագիր ներկայացնել ոչ միայն հարկային մարմիններին, այլև նաեւ դատավորների ինքնակառավարման վերոնշյալ մարմինին:

Հ. Մանուկյանը չի ժխտում, որ դատական համակարգում ներկայում աշխատում են էթիկայի կանոններից զուրկ, ոչ արհեստավարժ դատավորներ, որոնցից, սակայն, հարկ է ազատվել: «**Դա ղեկավարում է կատարել զգուշորեն, որ ամբողջ համակարգը կախվածության մեջ չընկնի «մաքման» այդ աշխատանքները կատարողներից**», -համոզված է Հ. Մանուկյանը՝ փաստելով, որ անցած տարի ընթացքում ութ դատավոր ենթարկվել է կարգադատական դատաքննության:

Հ. Մանուկյանը չի ժխտում,